ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի բյուջեի ձևավորումը

Հանձնաժողովի 2018 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն կձևավորվի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման և կարողությունների զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին, իսկ բյուջեի 1%-ի չափով հաշվարկված գումարն ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական եվ տարածքային կառավարման մարմինների պահպանում	
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	**791 891.0**
Աշխատանքի վարձատրություն	637 060.1
Ծառայությունների եվ ապրանքների ձեռքբերում, դրամաշնորհներ, սոցիալական նպաստներ եվ կենսաթոշակներ, հարկեր, պարտադիր վճարներ	154830.9
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական եվ տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում	
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր այդ թվում՝ հիմնական միջոցներ	**18 548.1**
Ընդամենը ծախսեր	**810 439.1**